

սրուտ զարդուցն եւ զբաղմականացն եւ որմոց տայր կարօտելոց»։ Հ. Հացունի կ'աւելցնէ որ « բազմակամի գարձեալ բարձեր են, զորս կարօտեալք կրնային դորձածել՝ բայց դահոյքներն՝ անշուշտ ոչ»⁽²⁶⁾։ Դժբաղդաբար բաղմարդիւն գիտնական Հայրը ուշադիր չէ եղած որ «զկապուտ զարդուցն եւ բաղմականացն եւ որմոց» կը բաշխուէր աղքատաց եւ ոչ բաղմականները (եւ որմերը)։ Կապուտ հիներուն մօտ կողոպուտ կամ աւար կը նշանակէ, ուրեմն հոս իմաստը որոշ է, Աշոտ Ողորմած իր պալատին զարդերուն (զորդերուն, որմերուն) արդիւնքն (որ ինքնին տեսակ մը աւար է եւ այդ նշանակութեամբ է որ Ասողիկ հոս կը գործածէ) աղքատներուն կը բաժնէր, այսպէս արքունի պալատը իր զարդէն ու շքեղութենէն, զորդերէն կողոպտելով։

Բազմակամ, արդէն բառն իսկ բաղմելու իր մը կը թելադրէ, բան մը որուն վրայ կը բաղմէին։ Իսկ բաղմիլը ինքնին հանդիսաւոր, պաշտօնական երեւոյթ մըն էր, նստելուն պատուաւոր տեսակը։ Արդարեւ, ինչպէս սովորութեանց մէջ ցոյց պիտի տամ, զորդը պատիւի նշան մըն էր, ինչպէս որ բարձը՝ տեսակ մը պատիւի աստիճանաշափ։

ՏԱՊԱՍՏԱԿ

Հ. Հացունի հետաքրքրական բառ մը կը ներկայացնէ Ոսկերեբանի հայ թարգմանութենէն, ըսելով. «Ոսկերեբանի թարգմանիչն իւր կողմանէ եւ բնադրէն անկախօրէն կը յաւելու տեղ մը՝ տապաստակս եւ բարձս բազումս աղնուականաց ճաշարանին մէջ (Մտթ. Բ, 69), բնականապէս սեպհականք հայ սեղանին, որոց առաջինք կը թուին աղնիւ սփռոցներ (տապաստ արկանելիք) բաղմականին վրայ ձգուած, նման հռովմէական ճոխ սրաստաց...։ Իսկ տապաստակաց վրայ կը դրուէին բարձեր»⁽²⁷⁾։ 1729ին հրատարակուած բառարանին համաձայն «տապաստ, սփռեալ» կը նշանակէ։ Ես պիտի փորձուէի տապաստակը զորդին մէկ հոմանիշը նկատել, եթէ սակայն աւելի հասկընալի մեկնութիւն մը չըլլար անոր համար։ Ըստ իս, տապաստակը զորդին, բաղմականին վրայ սփռուած ճաշի կաշիէ սփռոցն իսկ է, որ զորդին վրայ կը դրուէր, որուն շուրջ կը բաղմէին ճաշակիցները՝ նստելով բաղմոցներու, բարձերու վրայ, կամ ուղղակի զորդին վրայ, երբեմն կռնակնին տալով բարձի։

Անշուշտ այս բառը զորդին հոմանիշներուն կարգին տեղ չունի։ Բառը կը յիշուի մինակ մէկ անգամ մեր մատենադրութեան մէջ, այն ալ թարգմանութեան մը հայացման առնէն, բուն թարգմանութենէն անկախ գործածութեամբ։ Ես ալ համամիտ եմ Հ. Հացունիին որ տա-

(26) Ճաշեր եւ ինճոյք, էջ 55։

(27) Անդ, էջ 55-6։